Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվաքության ուսումնասիրության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար տիկին Աղավնի Պետրոսյանին

Հաշվետվություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվաքության ուսումնասիրության վարչության փորձագետի աշխատանքների

Հարգելի՛ տիկին Պետրոսյան,

Ես՝ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) բարեվաքության ուսումնասիրության վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ Յուրի Ասլանի Երզնկյանս, 2023 թվականի սեպտեմբերի 4-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. հավաքագրել եմ դատավորների, դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների և պետական այլ պաշտոններում նշանակվել (ընտրվել) հավակնող թվով 200 անձանց բարեվարքության հարցաթերթիկները, դրանցում ներկայացված տվյալները համադրել եմ օրենքով սահմանված կարգով ձեռքբերված տեղեկությունների հետ.

2. իրականացրել եմ բարեվարքության ուսումնասիրություն անցնող դատավորների, դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների և պետական այլ պաշտոններում նշանակվել (ընտրվել) հավակնող՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող թվով 90 անձանց և վերջիններիս ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծություն, խախտումներ հայտնաբերելու դեպքում Վարույթների և իրավական ապահովման Վարչության հետ նախապատրաստել եմ արձանագրություններ ու ներկայացրել Վարչության պետի հաստատմանը, իսկ հայտարարագրերում առկա անհամապատասխանությունների, անհամատեղելիության, շահերի բախման և այլ սահմանափակումների հայտնաբերման դեպքում մշակել եմ համապատասխան զեկուցագրերի նախագծեր և ներկայացրել Վարչության պետին.

3. մշակել և Վարչության պետին եմ ներկայացրել դատավորների, դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների և պետական այլ պաշտոններում

նշանակվել (ընտրվել) հավակնող թվով 200 անձանց բարեվարքության եզրակացությունների նախագծերը.

4. բարեվարքության վերաբերյալ եզրակացություններում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ իրականացրել եմ պարզաբանումներ թվով 190 անձանց հետ.

5. դատավորներին, դատախազներին, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին, Քննչական կոմիտեի ծառայողներին և պետական այլ պաշտոններում նշանակվել (ընտրվել) հավակնող անձանց՝ բարեվարքության հարցաթերթիկի լրացման առնչությամբ առկա հարցերի վերաբերյալ թվով 250 անձանց տրամադրել եմ խորհրդատվություն,

6. մասնակցել եմ դատավորների, դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների և պետական այլ պաշտոններում նշանակվել (ընտրվել) հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության մեթոդաբանության մշակմանը, ինչպես նաև ուսումնասիրել եմ բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ միջազգային փորձը, համապատասխան առաջարկություններ ներկայացրել Վարչության պետին.

7. իրականացրել եմ Վարչության ընթացիկ գործառույթներին առնչվող թեմատիկ ուսումնասիրություններ, վերլուծություններ, այլ աշխատանքներ:

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության ուսումնասիրության վարչության փորձագետ՝

Յուրի Երզնկյան

«04» սեպտեմբերի 2024

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(Հաշվետու ժամանակահատված՝ 04.09.2023թ.-04.09.2024թ.)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության ուսումնասիրության վարչության փորձագետ Յուրի Երզնկյանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 4-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 4-ն իրականացրած աշխատանքներն՝ ըստ ամփոփիչ փուլի արդյունքների գնահատվում է.

1. Բավարար
2. Լավ
3. Գերազանց

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
բարեվարքության ուսումնասիրության վարչության պետի
ժամանակավոր պաշտոնակատար՝
Աղավնի Պետրոսյան

(ստորագրություն)

04.09.2024թ.